## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

17.03.2014թ. կնքված «ՊԳԿՎ-2014-ԲԸԱՀ-1» պայմանագրի

ք. Երևան «12» « 06 » 2014թ.

Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր պետական գույքի կառավարման վարչությունը, (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4) այսուհետ՝ <Վարձակալ>, ի դեմս վարչության աշխատակազմի ղեկավար՝ Վահագն Հարությունյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա և որի անունից համաձայն 09.06.2014թ. տրված լիազորագրի հանդես է գալիս լիազորված անձ՝ Դիանա Գրիգորյանը (անձնագիր՝ AK0573998, տրված՝ 26.07.2010թ. 004-ի կողմից, հասցե՝ ք.Երևան, Փափազյան 13շ. բն.57), մի կողմից և <Հանարդնախագիծ> բաց բաժնետիրական ընկերությունը (հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4, պետական գրանցման համարը՝ 286.130.05566, գրանցման ամսաթիվը՝ 01.12.2004թ., վկայական՝ 03 Ա 066836), այսուհետ՝ <Վարձատու>, ի դեմս տնօրեն Արայիկ Հարությունյանի (նույնականացման քարտ 000954255, տրված՝ 22.01.2013թ., 046-ի կողմից, բնակության վայրը՝ ք. Եղվարդ, Ազատամարտիկների 2), որը գործում է կանոնադրության հիման վրա մյուս կողմից կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին

Սույն համաձայնագիրը կնքվել է հիմք ընդունելով՝

1. ՀՀ նախագահի 2014 թվականի ապրիլի 30-ի ՆՀ-97-Ն հրամանագիրը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների վերակազմակերպման վերաբերյալ

### 1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրի 1.3 կետում նշված «31.12.2014թ.» բառերը փոխարինել «01.06.2014թ.» բառերով:

1.2 Պայմանագրի 2.4.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «մինչև 2014 թվականի հունիսի 01-ը վճարել Օբյեկտի վարձավճարի գումարը՝ 16667000 (տասնվեց միլիոն վեց հարյուր վաթսունյոթ հազար) ՀՀ դրամ»:

1.2 Պայմանագրի 3.1 կետ շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Օբյեկտի վարձավճարի չափը կազմում է 16667000 (տասնվեց միլիոն վեց հարյուր վաթսունյոթ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկատեսակները»:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրն ենթակա է նոտարական վավերացման, իսկ համաձայնագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

2.4 Սույն համաձայնագիրն օրինական է միայն այն դեպքում, եթե այն ստորագրված է Կողմերի կողմից, վավերացված է նոտարի կողմից և գրանցված է անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

2.5 Կողմերը հաստատեցին, որ Վարձակալի կողմից զբաղեցված 606 (վեց հարյուր վեց) քառակուսի մետր մակերեսով տարածքը հանձնվել է Վարձատուին, համաձայն 01.06.2014թ. Հանձնման-ընդունման ակտի:

2.6 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկական օրինակ, մեկ օրինակը պահվում է ԿԵՆՏՐՈՆ նոտարական տարածքի նոտարական գործում, իսկ մյուս օրինակը տրվում է ներկայացնելու ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ գրանցելու համար: Համաձայնագրի օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **Վարձատու** | **Վարձակալ** |
| --- | --- |
| «Հանարդնախագիծ» ԲԲԸ | ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն |
| ք. Երևան, Տիգրան Մեծի 4 | ք. Երևան, Տիգրան Մեծի 4 |
| «Անելիք Բանկ» ՓԲԸ | ՀՀ ՖՆ աշխ. գործառ. Վարչություն |
| Հ/Հ 11800038047700 | Հ/Հ 900011145084 |
| ՀՎՀՀ 02507379 | ՀՎՀՀ 02528489 |
| **Տնօրեն՝** | **Աշխատակազմի ղեկավար՝** |
| **Արայիկ Հարությունյան** | **Վահագն Հարությունյան** |
| ________________ Կ.Տ. | ________________ Կ.Տ. |

ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ ՏԱՍՆԵՐԿՈՒՍԻՆ

սույն համաձայնագիրը վավերացվել է իմ՝ Երևան քաղաքի Կենտրոն նոտարական տարածքի նոտար *ԷԼՄԻՐԱ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՍ* կողմից:

Սույն համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը ստուգված է, գործունակությունը՝ պարզված:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 301 հոդվածի համապատասխան, սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում՝ 30 (երեսուն ) աշխատանքային օրյա ժամկետում:

Գրանցված է սեղանամատյանում՝ 5406 ով
Գանձված է պետ. տուրք և ծառայության վճար համաձայն
ՀՀ «Պետ.տուրքի մասին և Նոտարիատի մասին» օրենքների
Նոտար՝ ------------------------